ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 25

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորատի 26.08. 2021թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին ռեկտորատի 16 (տասնվեց) անդամից 12-ը (տասներկուսը):

Նիստին մասնակցում էին՝

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ,
2. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ,
3. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն,
4. Վ. Խաչատրյան՝ արհեստակցական կազմակերպության նախագահ,
5. Թ.Խաչատրյան՝ գրադարան - ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն,
6. Ռ. Քալաջյան՝ ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ,
7. Ա. Մկրտչյան ՝ ռազմական ամբիոնի պետ,
8. Լ. Մարտիրոսյան ՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի ՊԿ
9. Թ. Մելիքյան՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
10. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան,
11. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան,
12. Ա. Հովհաննիսյան՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

1. ՇՊՀ-ի առկա ուսուցման համակարգում 2021-2022 ուստարում դասընթացների կազմակերպման ու կանոնակարգման նպատակով ժամատախտակի և հերթերի հաստատման մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ՝

Ն. Ավետիսյան

2. ՇՊՀ-ի առկա աշխատաժամանակի ռեժիմի սահմանման մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ՝ Ե. Սերոբյան

3. 2021/2022 ուսումնական տարվա բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թվի տասը տոկոսի չափով «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի միջոցների հաշվին ուսման վարձի փոխհատուցման մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ՝

Ն. Ավետիսյան

4. 2020թ.-ի սեպտեմբերի 27-ին Արցախի հանրապետության դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ պատերազմին մասնակից և գերեվարված բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի «Ինֆորմատիկա» մասնագիտության հեռակա ուսուցման վճարովի համակարգի ուսանող Գևորգ Նորայրի Ասատրյանի ուսանողական իրավունքների վերականգման մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ՝

Ն. Ավետիսյան

5. Ընթացիկ հարցեր

5.1 ՊԴ համակազմի սանիտարական գրքույկների հարցի մասին

1. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ-ի առկա ուսուցման համակարգում 2021-2022 ուստարում դասընթացների կազմակերպման ու կանոնակարգման նպատակով ժամատախտակի և հերթերի հաստատման մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ նոր ուսումնական տարում վերոգրյալ հարցերի կազմակերպման նպատակով ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի աշխատակիցների կողմից ուսումնասիրվել է բուհի լսարանային ֆոնդի ու ուսանողների խմբերի բաշխվածությունը և դրա հիման վրա, դեկանների հետ համատեղ աշխատանքի արդյունքում, ռեկտորատի անդամների հաստատմանն է ներկայացվում հերթերի բաշխվածությունն ու ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ժամատախտակը.

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2021-2022 ուսումնական տարվա առկա ուսուցման բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի ժամանակացույցը (կցված է).

Ֆակուլտետ	Կուրսեր	Հերթ
Բնագիտամաթեմատիկական	Բակալավրի կրթական ծրագրի 1-ին , 2-րդ, 3-րդ կուրսեր Բակալավրի կրթական ծրագրի 4-րդ կուրսեր Մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին, 2-րդ կուրսեր	1-ին 2-րդ 2-րդ
Հումանիտար գիտությունների և արվեստի	Բակալավրի կրթական ծրագրի 1-ին , 2-րդ կուրսեր Բակալավրի կրթական ծրագրի 3-րդ, 4-րդ կուրսեր Մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին, 2-րդ կուրսեր	1-ին 2-րդ 2-րդ
Սոցիալական գիտությունների և իրավունքի	Բակալավրի կրթական ծրագրի 1-ին , 2-րդ, 3-րդ կուրսեր Բակալավրի կրթական ծրագրի 4-րդ կուրսեր Մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին, 2-րդ կուրսեր	1-ին 2-րդ 2-րդ
Մանկավարժության	Բակալավրի կրթական ծրագրի 1-ին , 2-րդ, 3-րդ, 4-րդ կուրսեր (բացի «Տարր.մանկ. և մեթոդիկա» 4-րդ կուրսից) «Տարր.մանկ. և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրի 4-րդ կուրս Մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին, 2-րդ կուրսեր	1-ին 2-րդ 2-րդ
Ռազմական ամբիոն	Բակալավրի կրթական ծրագրի 1-ին , 2-րդ, 3-րդ, 4-րդ կուրսեր Մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին, 2-րդ կուրսեր	1-ին 1-ին
Արվեստի ամբիոն	Բակալավրի կրթական ծրագրի 1-ին , 2-րդ, 3-րդ, 4-րդ կուրսեր Մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին, 2-րդ կուրսեր	1-ին 2-րդ

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակում բակալավրի առկա/հեռակա և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի, գիտելիքների գնահատման, լուծարային շրջանի կազմակերպման և պրակտիկաների կազմակերպման ժամանակահատվածների մասին

ԺԱՄԱՑԱԽՏԱԿ

Ի ՀԵՐԹ

ԴԱՍԱԺԱՄ	ՍԿԻԶԲ	ԱՎԱՐՏ
1-2	09:00	10:20
3-4	10:25	11:45
5-6	11:50	13:10

II ՀԵՐԹ

ԴԱՍԱԺԱՄ	ՍԿԻԶԲ	ԱՎԱՐՏ
1-2	13:30	14:50
3-4	14:55	16:15
5-6	16:20	17:40

1. Ուսուցման գործընթացը կազմակերպել հետևյալ ժամանակահատվածներում.

Բակալավր (առկա) I-IV կուրսեր	Բակալավր (հեռակա) I- V կուրսեր	Մագիստրատուրա
01.09.2021թ. մինչև 24.12.2021թ.	01.11.2021թ. մինչև 30.11.2021թ.	01.09.2021թ. մինչև 24.12.2021թ.

2. Գիտելիքների գնահատումն ըստ ուսուցման ձևերի և կրթական աստիճանների կազմակերպել հետևյալ ժամանակացույցով.

I կիսամյակ

Բակալավր (առկա)

Մինչև 64 լսարանային ժամ	64 և ավելի լսարանային ժամ
Ամփոփիչ ստուգում 20.12.2021թ.-24.12.2021թ.	**Առաջին ստուգում** 25.10.2021թ. - 29.10.2021թ. **Երկրորդ ստուգում** 10.01.2022թ.-27.01.2022թ.

Բակալավր (հեռակա)

Ստուգողական/անհատական աշխատանքների հանձնում - 20.12.2021թ.-24.12.2021թ.
Ամփոփիչ ստուգում - 10.01.2022թ.-27.01.2022թ.

Մագիստրատուրա

Ստուգողական/անհատական աշխատանքների հանձնում - 20.12.2021թ.-24.12.2021թ.
Ամփոփիչ ստուգում - 10.01.2022թ.-27.01.2022թ.

3. Լուծարային շրջանները կազմակերպել.

Բակալավր (առկա)

I լուծարք 14.02.2022թ.- 18.02.2022թ.
II լուծարք 21.02.2022թ. - 25.02.2022թ.

Բակալավր (հեռակա)

I լուծարք 15.03.2022թ.- 22.03.2022թ.
II լուծարք 29.03.2022թ. – 05.04.2022թ.

Մագիստրատուրա

I լուծարք 14.02.2022թ.- 18.02.2022թ.
II լուծարք 21.02.2022թ. - 25.02.2022թ.

4. Ուսումնական պլաններով նախատեսված պրակտիկաները կազմակերպել հետևյալ ժամանակահատվածում.

N	Պրակտիկա՝ ըստ ուսուցման ձևերի և կուրսերի	Կիսամյակ	Տևողություն	Ժամանակահատված
1	Բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգի 4-րդ կուրսերի ուսանողների պրակտիկա	1-ին	5 շաբաթ	01.11.2021թ-03.12.2021թ.
2	Բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգի «Սոցիալական աշխատանք» մասնագի-տության 3-րդ և 4-րդ կուրսերի ուսումնական պրակտիկա (շաբաթական 1 օր)	1-ին	12 շաբաթ	04.10.2021թ-24.12.2021թ.
3	Բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման համակարգի «Սոցիալական աշխատանք» մասնագի-տության 4-րդ կուրսի ուսանողների պրակտիկա	1-ին	4 շաբաթ	01.02.2022թ.-22.02.2022թ.
4	Բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ուսանողների պրակտիկա	1-ին	5 շաբաթ	01.02.2022թ.-07.03.2022թ.
5	Մագիստրոսի կրթական ծրագրով 2-րդ կուրսի ուսանողների պրակտիկա	1-ին	4 շաբաթ	15.11.2021թ.-10.12.2021թ.

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
Կողմ՝12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝
ՇՊՀ-ի առկա աշխատաժամանակի ռեժիմի սահմանման մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝
ՇՊՀ հիմնադրամի աշխատակիցների աշխատանքը կազմակերպել առկա աշխատաժամանակի ռեժիմով՝ երկուշաբթի օրվանից ուրբաթ օրը՝ ժամը 09:00-18:00-ը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
Կողմ՝12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՍԵՑԻՆ՝
2021/2022 ուսումնական տարվա բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թվի տասը տոկոսի չափով «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի միջոցների հաշվին ուսման վարձի փոխհատուցման մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց,որ բակալավրի կրթական ծրագրով ուսումնական հաստատությունների անվճար ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թվի տասը տոկոսի չափով բարձրագույն ուսումնական հաստատությունների միջոցների հաշվին յուրաքանչյուր տարի նախարարի հրամանով հաստատվում է ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման ենթակա մասնագիտությունների և տեղերի ցանկը:

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ ըստ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի հաստատված մասնագիտությունների և տեղերի համաձայն՝ համապատասխան մասնագիտությամբ ամենաբարձր միավորներով (ամփոփաթերթերը՝ կից) համալսարանի վճարովի համակարգ ընդունված ներքոհիշյալ ուսանողների 2021-2022 ուստարվա վարձավճարը լրիվ փոխհատուցելու է համալսարանի միջոցների հաշվին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հիմք ընդունելով «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասը՝ 2021-2022 ուսումնական տարում «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի վճարովի համակարգ ընդունված ներքոնշյալ ուսանողների վարձը լրիվ փոխհատուցել համալսարանի միջոցների հաշվին՝ անվճար ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թվի տասը տոկոսի չափով.

2021/2022 ուսումնական տարվա բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թվի տասը տոկոսի չափով «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի միջոցների

հաշվին ուսման վարձի փոխհատուցման ենթակա ուսանողների՝ ըստ մասնագիտությունների և տեղերի հրամանագրման մասին

Դասիչը (ծածկագիրը)	Մասնագիտությունը, Կրթական ծրագիրը	Ազգանուն, անուն, հայրանուն	Վարձի չափը
1	2	3	4
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**		
	011401.18.6 Պատմություն	Իկիլիկյան Աննա Արմենի	300.000 /ՀՀ դրամ/
	011401.18.6 Պատմություն	Ասատրյան Մելինե Աղասիի	300.000 /ՀՀ դրամ/
023201.00.6	**Լեզվաբանություն**		
	023201.01.6 Թարգմանչական գործ /անգլերեն և հայերեն/	Մինասյան Մարգարիտա Սեյրանի	350.000 /ՀՀ դրամ/
	023201.01.6 Թարգմանչական գործ /անգլերեն և հայերեն/	Մանուկյան Իրինա Գագիկի	350.000 /ՀՀ դրամ/
041301.00.6	**Կառավարում**		
	041301.01.6 Կառավարում /ըստ ոլորտի/	Խաչատրյան Քրիստինե Արթուրի	350.000 /ՀՀ դրամ/
053101.00.6	**Քիմիա**		
	053101.02.6 Դեղագործական քիմիա	Արզումանյան Ինեսա Անդրանիկի	350.000 /ՀՀ դրամ/
041101.00.6	**Հաշվապահական հաշվառում և հարկում**		
	041401.01.6 Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	Հրաչյան Լևոն Գևորգի	350.000 /ՀՀ դրամ/

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

4. ԼՍԵՑԻՆ՝

2020թ.-ի սեպտեմբերի 27-ին Արցախի հանրապետության դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ պատերազմին մասնակից և գերեվարված բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի «Ինֆորմատիկա» մասնագիտության հեռակա ուսուցման վճարովի համակարգի ուսանող Գևորգ Նորայրի Ասատրյանի ուսանողական իրավունքների վերականգնման մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Գրությամբ դիմել ՀՀ ԿԳՄՍ նախարար պարոն Վ. Դումանյանին, որում նշել, որ հենվելով «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման» կարգի (ՀՀ ԿԳՆ 17 դեկտեմբերի 2018թ. թիվ 1676

հրամանի 3-րդ մասի 20, 21, 22 կետերի և նկատի ունենալով գերեվարվածի կարգավիճակի հետ կապված բարոյահոգեբանական կողմը, ինչպես նաև հարցի հասարակական հնչեղությունը, խնդրել թույլ տալ վերականգնել Գևորգ Նորայրի Ասատրյանի ուսանողական իրավունքները «Ինֆորմատիկա» մասնագիտության հեռակա ուսուցման 5-րդ կուրսում՝ հնարավորություն տալով 03.10.2020-21.07. 2021թվ. ընկած ժամանակահատվածի համար նախատեսված ուսումնառությունը կազմակերպել անհատական գրաֆիկով.

1-ին կիսամյակի (01.11.2020-30.11.2020 թվական) համար՝ սեպտեմբերի 6-ից 30-ը, 2-րդ կիսամյակի (01.04.2021-30.04.2021 թվական) համար՝ հոկտեմբերի 1-ից 20-ը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
Կողմ՝12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ընթացիկ հարցեր

5.1 ԼՍԵՑԻՆ՝

ՊԴ համակազմի սանիտարական գրքույկների հարցի մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ այս տարի ևս բուհի պրոֆեսորադասախոսական համակազմի պարբերաբար բուժզննման գործընթացի հետ կապված, սանիտարական գրքույկներով պետք է ներկայանա Գյումրու թիվ 2 պոլիկլինիկա՝ հետազոտության նպատակով:

Պարոն Սերոբյանը հանձնարարեց ֆակուլտետների դեկաններին հետևելու, որպեսզի գործընթացը ճիշտ ժամանակին կազմակերպվի և իրականացվի:

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ	Ե. Սերոբյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ	Գ. Նիկողոսյան
ՈՒսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ	Ն. Ավետիսյան
Ռեկտորի օգնական՝ Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ս. Շահպարոնյան Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն՝	Թ. Խաչատրյան

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի ՊԿ՝	Լ.Մարտիրոսյան
Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան՝	Թ. Մելիքյան
Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝	Ռ. Մարդոյան
Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝	Օ. Հովհաննիսյան
Ռազմական ամբիոնի պետ՝	Ա. Մկրտչյան
Անձն.կառ.և իրավ.ապահովման բաժնի պետ՝	Ա. Հովհաննիսյան